Եվրասիա համագործակցություն հիմնադրամի «Սոցիալական ձեռներեցություն» ծրագիր

Հեղինակ՝ Իրինա Փահլևանյան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ,
«Սոցիալական ձեռներեցություն» ծրագրի համակարգող

Այսօր «Սոցիալական ձեռներեցություն» տերմինը շատ է օգտագործվում: Բայց ի՞նչ է դա նշանակում: Սոցիալական ձեռներեցությունը բնորոշելու շատ փորձեր կան: Վերցնենք, օրինակ, հետևյալը. «Սոցիալական ձեռներեցությունը սոցիալական ձեռներեցի աշխատանքն է: Սոցիալական ձեռներեցը նա է, ով գիտակցում է սոցիալական հիմնախնդիրները և, օգտագործելով ձեռնարկատիրական սկզբունքները, կազմակերպում, ստեղծում և կառավարում է ձեռնարկություն՝ սոցիալական փոփոխություն կատարելու համար: Ի տարբերություն գործարար ձեռներեցի, ով իր գործունեությունը հիմնականում չափում է շահույթով և եկամտով, սոցիալական ձեռներեցը հաջողությունը գնահատում է հասարակության վրա ունեցած իր ազդեցությամբ»:

Հանդիպում է երկու տիպի սոցիալական ձեռնարկություն. մեկի դեպքում նախապես շահույթ հետապնդող ձեռնարկությունը նաև մտահոգվում է հանրային խնդիրներով և իր եկամուտների մի մասը հատկացնում դրանց: Այս դեպքում, պարզ ասած, բիզնեսն օգնում է հասարակական գործունեությանը կամ ինքն է դրանով զբաղվում: Այս մոդելը հեռու չէ ռազմավարական կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կամ ներդրման մոդելից, որի տարածմամբ Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) նույնպես զբաղվել է տարիներ շարունակ:

Մյուսի դեպքում հասարակական կազմակերպությունն (ՀԿ) իր գործունեությանը կից ստեղծում է գործարարական հիմնարկ (եթե իրավունք չունի անմիջականորեն շահույթ ստանալ՝ օրինակ, այդպես է կարգը Հայաստանում), որի շահույթն օգտագործվում է հասարակական գործունեության համար:

2009թ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Չեխիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության հետ համատեղ նախաձեռնեց սոցիալական ձեռներեցության մեկնարկային ծրագիր՝ ՀԿ-ների համար դասընթացների, խորհրդատվության և կոնկրետ ձեռնարկատիրական նախագծերի ֆինանսական աջակցության միջոցով:

Ծրագրի նպատակն էր Հայաստանում և Վրաստանում ստուգել սոցիալական ձեռնարկության՝ որպես կենսունակ

բիզնես մոդելի, զարգացումն այն հասարակական կազմակերպությունների համար, որոնք ստեղծելով իրենց կից բիզնես օղակը տեղական օրենսդրության շրջանակներում, շահույթ են հետապնդում սոցիալական խնդիրներ լուծելու իրենց առաքելությունն իրականացնելու նպատակով:

Ծրագիրը սկսվեց հասարակական կազմակերպությունների աշխատանքը կարգավորող օրենսդրական դաշտի և երկրում սոցիալական ձեռներեցության վիճակի գնահատմամբ: Քառօրյա սեմինարի ընթացքում 17 հասարակական կազմակերպությունների 30 ներկայացուցիչներ հարստացրին իրենց գիտելիքները ձեռնարկատիրական մտահղացումների և (կամ) գործողությունների ընտրության, փորձարկման և պլանավորման վերաբերյալ:

Կատարված օրենսդրական վերլուծության նպատակն էր բացահայտել հասարակական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության բացերը: Ուսումնասիրությունը հիմնվում է փորձագետների հետ հարցազրույցների և առկա տվյալների հետազոտման վրա: ՀՀ հասարակական կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրության (մասնավորապես ՀՀ օրենքներ, ՀՀ Կառավարության որոշումներ, ՀՀ նախագահի հրամաններ և այլն) վերլուծության, ինչպես նաև օրենսդրության կիրառման վերաբերյալ հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ ՀԿ-ների վերաբերյալ օրենսդրությունն ազատական է: Այն հնարավորություն է ընձեռում հասարակությանը ձևավորել միություններ և առանց խոչընդոտների գրանցել դրանք որպես իրավաբանական անձ: Դա է փաստում նաև Հայաստանում գրանցված մոտ 5000 հասարակական կազմակերպությունների առկայությունը: Չկա նաև հարկադրական պահանջ լուծարելու կազմակերպությունը, եթե այն, օրինակ, չի գործում, որը նույնպես վկայում է օրենսդրության ազատականության մասին: Մյուս կողմից, ՀԿ-ները չունեն շահութաբեր գործունեությամբ զբաղվելու իրավունք:

ՀՀ հարկային օրենսդրության հետ կապված վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀԿ-ների համար այն չունի էական խրախուսման կամ հարկերից ազատման մեխանիզմներ,

որոնք կխթանեին նրանց գործունեությունը և կնպաստեին ֆինանսական կայունությանը:

Հարկային օրենսդրության մեջ կիրառվող խրախուսման եղանակները բավարար չեն ֆիզիկական անձանց համար բարեգործություն իրականացնելու կամ քաղաքացիական հասարակության հաստատությունները հովանավորելու համար: Այսպիսով, այսօր առկա օրենսդրության պայմաններում Հայաստանում ՀԿ-ների սոցիալական ձեռներեցությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է ՀԿ-ին կից ստեղծել շահութաբեր գործարարությամբ զբաղվելու իրավունք ունեցող կազմակերպություն:

2010 թվականի սկզբին ԵՀՀ-ի կողմից հայտարարված դրամաշնորհային մրցույթին ներկայացված ինը ծրագրերից երեքն արժանացան փոքր դրամաշնորհների, որին հաջորդեց Վրաստանի գործընկերների հետ համատեղ ուսուցողական այցը Չեխիայի Հանրապետություն՝ ՀԿ-ների կողմից ձեռնարկատիրական գործունեության միջոցով ռեսուրսներ գոյացնելու լավագույն փորձն ուսումնասիրելու նպատակով:

Ձեռք բերված փորձի և դրամաշնորհային ֆինանսավորման արդյունքում, Ճամբարակի համայնքում գործող հաշմանդամ երեխաների ծնողների «Աստղացոլք» ՀԿ-ն զարգացրեց փայտագործության սոցիալական ձեռնարկությունը, որտեղ աշխատում են չորս տեղաբնակներ, այդ թվում՝ երկու հաշմանդամ (www.handmadegifts.am):

Փայտագործական արտադրանքի վաճառքից ստացված հասույթով հիմնվել է ամենօրյա ցերեկային խնամքի կենտրոն համայնքի երեխաների համար, որոնց մեծ մասը հաշմանդամ են կամ պատկանում են սոցիալապես անապահով խմբերին (օրինակ, փախստական կամ ծնողազուրկ երեխաներ): Կենտրոնը շահագործելու և սկզբնական աշխատանքներն ապահովելու նպատակով կազմակերպությանը հաջողվեց աջակցություն ստանալ տեղի քաղաքապետարանից, ինչպես նաև այլ դոնոր կազմակերպություններից:

Մեկ այլ նախագծի արդյունքում «Հայ երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ-ն հիմնել է կարուձևի արհեստանոցներ Ախթալայում և Եղեգնաձորում, որտեղ հիմնականում աշխատում են կանայք սոցիալապես խոցելի խմբերից (http://shop.aywa.am):

Սոցիալական ձեռնարկության մոդելը հաջողությամբ կիրառվել է նաև «Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ-ի կողմից: Տեղացի կանայք զբաղվում են անկողնային և մանկական սպիտակեղենի արտադրությամբ և արտադրանքը վաճառում են տեղի հյուրանոցներին, հիվանդանոցներին և խանութներին:

2011թ. ԵՀՀ-ն ֆինանսավորեց «Հայկական ճամբար» բարեգործական հասարակական կազմակերպության սոցիալական ձեռնարկություն (www.armcamp.am) հիմնելու նախաձեռնությունը: Հատուկ կարիք ունեցող թվով քսան մարդ մասնակցել է կավագործության դասընթացների,

որոնցից առնվազն տաս լավագույն սաները աշխատանքի կանցնեն նույն արհեստանոցում:

Նախագծի սոցիալական նպատակը սպորտի խթանումն է հաշմանդամություն ունեցող մարդկանց շրջանում՝ զուգահեռաբար կազմակերպելով տարբեր միջոցառումներ:

Սոցիալական ձեռներեցները պատրաստ են կիսելու իրենց փորձը: Նրանք ակտիվորեն մասնակցում կամ հենց իրենք են կազմակերպում ցուցահանդես-վաճառքներ, տոնավաճառներ, Տարեմուտին կամ այլ ծեսերին նվիրված միջոցառումներ, որտեղ իրականացվում է ձեռագործ աշխատանքների ցուցադրում և վաճառք:

Սոցիալական նախաձեռնությունների հեղինակները նշում են. «Ծրագիրը հիմնովին փոխեց մեր ընկալումն ու պատկերացումը ՀԿ-ների աշխատանքի և դրանց կողմից տրամադրվող աջակցության վերաբերյալ: Մենք դեռևս ամբողջովին չենք անկախացել դոնոր կազմակերպություններից, սակայն սոցիալական ձեռներեցության ոլորտում ես տեսնում եմ հեռանկարներ, որոնք ապագայում կդառնան մեր կայուն զարգացման երաշխիքը»:

ԵՀՀ-ն ունի հարուստ փորձ Հարավային Կովկասում ծրագրերի իրականացման և դրամաշնորհների կառավարման ասպարեզում: ԵՀՀ-ի տեղական երեք գրասենյակները գտնվում են Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում, և դրանցից յուրաքանչյուրը քաղաքացիական հասարակության զարգացման բնագավառում ունի տասնհինգ տարվա փորձ:

Փորձի և ռեսուրսների առումով՝ ծրագրեր, գաղափարներ, համակարգեր և քաղաք դասեր, ԵՀՀ-ն կապված է Եվրասիա հիմնադրամի լայն ցանցի հետ, ինչն էլ նպաստում է ԵՀՀ-ի գործունեությանը Հարավային Կովկասում: Այն կոչված է հզորացնելու մարդկանց սոցիալական արդարության և տնտեսական բարգավաճման ասպարեզներում էական փոփոխությունների հասնելու համար և իրականացնում է կոնկրետ ծրագրեր, որոնք օգնում են մարդկանց բարելավել իրենց համայնքն ու կյանքը: (www.epfound.am).